ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՍԻԴՈՅՆԵՐ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 63-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Սիդոյներ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Սիդոյներ» ՍՊԸ-ի դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թվականի օգոստոսի 17-ին: Սահմանադրական դատարանի՝ 2021 թվականի սեպտեմբերի 2-ի ՍԴԱՈ-187 աշխատակարգային որոշմամբ գործն ընդունվել է քննության, գործով զեկուցող է նշանակվել Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանը և դատաքննությունը նշանակվել է 2022 թվականի փետրվարի 8-ին:

2. Հաշվի առնելով, որ Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 8-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ սույն գործի վարույթը վերսկսվել է, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված՝ գործի վարույթը կասեցնելու հիմք, մասնավորապես՝ անհրաժեշտ է սույն գործով պահանջել լրացուցիչ ապացույցներ, ուստի գտնում է, որ սույն գործի վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Սիդոյներ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնել մինչև կասեցման հիմքերը վերանալը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

8 փետրվարի 2022 թվականի
ՍԴԱՈ-22